Գավթում հարավային որմին

Հազար երեսուներեք (1584) թվին ես Դովլաթբեկս՝ Մալխութի թոռս, գնեցի իմ արդար եկամուտով՝ ոսկով հող, տվի Սուրբ Կարապետին ի հիշատակ ինձ: (Վանքի) սպասավորները խոստացան տարին մեկ պատարագ Կարմիր կիրակի օրը:

Տաճարում արևմտյան որմին

Հազար ութսունութ (1639) թվին Սուրբ հոգու զորությամբ ես՝ երևանցի Ավագս՝ Աղաբաբի որդին, և իմ ամուսին Դաստագյուլը միաբանվեցինք ու գնեցինք մեկ ստակ այգի (մուք) Փարպիում և տվինք Սուրբ Կարապետին իբրև հիշատակ մեր հոգիների, հանցանքների փրկության և մեր զավակների արևշատության: Եվ սրա առաջնորդ Զաքարիա վարդապետը վաթսուն միաբաններով խոստացան պատարագել Քրիստոսին մեզ համար ամեն տարի մեծահրաշ տոնի օրը: Արդ՝ եթե որևէ մեկը մերոնցից կամ օտարներից, տղաներից կամ աղջիկներից հանել ջանա մեր տված տասանորդը, Աստծուց և նրա բոլոր ընտրյալներից դատվի: Որոնք հակառակվեն, հարյուր ոսկի տուգանք տան: Իսկ կատարողները Տիրոջից օրհնվեն. ամեն:

Ավետարանի հիշատակարանից

Մենք օհանավանեցիքս՝ ես՝ Շահվելիս, ես՝ Զաքարես, Միրզես, ես՝ Ամրումս, ես՝ Քեչիս, ես՝ Զաքարի տղա Միրզես, ես՝ Ավետիսս, ես՝ Հուրիի տղա Հանեսս, ես՝ Ղոչիս, ես՝ Մկրտիչս, համաձայնության եկանք, Դիլանչու Ամրումի այգին տվինք իբրև հիշատակ Սուրբ Կարապետին: Ինչ մարդ էս բանի մեջ այլևայլ խոսք, հետո կամ առաջ բան ասի, կտրի-կապի, Սուրբ Կարապետը նրա հիշատակը ջնջի: Մենք՝ սպասավորներս խոստացանք տարեկան երկու ժամ Վարդավառի տոնին, Սուրբ Խաչին (պատարագ մատուցել): Գրությանս աղաչանքների կատարողները Աստծուց և բոլոր սրբերից թող օրհնվեն հավիտյանս հավիտենից. ամեն: Հայր մեր... 1058 (1609) թվին:

Անթվական արձանագրություններ

Այն արձանագրությունները, որոնք թվական ունեն, դրանք արտագրեցինք ըստ խոսքի ու գրի: Այժմ կարտագրենք նույն ոճով ու

գրով և տեղերի նշումով այն արձանագրությունները, որոնք թվական չունեն: Նրանց, որոնց շարքը իմանամ, կարգով կարտագրեմ, իսկ որոնց կարգը չիմանամ, հետ ու առաջ լինելու համար դուք ներեցեք:

Գավթում հյուսիսային որմին

Աստծու շնորհիվ պարոնուհի Դդոփալ Թամարի, իր թագավորական որդու՝ մեծ Մելիքսեղեկ Գեորգի, տերության ժամանակ ես Գրիգորի որդի Ամսաջանս և իմ կին Բեսուճը (գրեցինք այս արձանագրությունը): Այնպես եղավ, որ պարոնների ձեռքից երկիրը խլեցին, ես չհեռացա ծառայությունից: Աստված պարոններին հաջողություն տվեց, երկիրը վերագրավեցին: Օհանավանքը ինձ տվին իբրև ժառանգություն: Ժողովրդի տները խլված էին, այգիների, հողերի վրա տասանորդ էր դրված:

Մենք էլ ընդհանրապես Սուրբ Կարապետին հանձնեցինք վանքի այգիների հողի տասանորդը, վերցրինք մեր պարոնների արևաշատության և պարոն Աթաբեկի Շահնշահի և Շրվանշահի հոգու համար և հավիտենական արձանագրություն գրեցինք:

Ես՝ Ամսաջանս, վերցրի և հաստատեցի պարոնների հրամանով: Ով այս արձանագրությունը ջանա խափանել, պարոնների ու մեր մեղքերին պարտական լինի, Աստծուց դատվի, Հուդայի և Կայենի վարձերը առնի, երեք սուրբ ժողովներից նզովված լինի:

Այս Սուրբ ուխտի սպասավորները խոստացան տարեկան տասներկու պատարագ Հոգեգալստյան տոնին՝ երեքը Շահնշահի, երեք Շրվան շահի, երկուսը Զանի, երկուսը Ամսաջանի, երկուսը Բեսուճի համար: Այս արձանագրությունը կատարողները թող Աստծուց օրհնվեն. ամեն:

Մատուռի խաչի վրա

Ես Նանաս՝ Ավագ Սարգսի որդի, Զաքարեի որդու մեծ հավատապետ Սարգսի դուստր Նանաս, այս աստվածաբնակ խորանը և տերունական խաչը կանգնեցրի վարդապետ Մարգարեի նորակերտ (գերեզմանի) վրա: Իր աշակերտության սկզբից (Մարգարեն) որդիացավ ինձ և ավելի եղավ քան որովայնի ծնունդն է լինում: Նա հոգում էր իմ հոգու օգուտը, և ես տեսնելով նրա սրտի հո-